



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 դեկտեմբերի 2019 թվականի N 1211-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ
ԴԱՇՏԱԴԵՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ 06-032-0005-0017
ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԳԱՐՈՆ ՄԻՆԱՍԻ
ՍԱԱԿՅԱՆԻ ԵՎ ՆԱԽՇՈՒՆ ՎԻՏՅԱՅԻ ԱՆՏԱՆՈՍՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով քաղաքացի Նախշուն Վիտյայի Անտանոսյանի դիմումը (նույն. քարտ AN0272891, տրված 23.11.2012թ.) դիմումը, «Արտյոմ Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով, նկատի ունենալով, որ տնատիրության սպասարկման համար օրհանական հատկացված 0,77122հա մակերեսով հողամասը և կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված և ինժինեռատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը՝ 960թ-ին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

1. Օրենքի ուժով ճանաչել Ագարոն Մինասի Սաակյանի և Նախշուն Վիտյայի Անտանոսյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի գ. Դաշտադեմ 06-032-0005-0017 կադաստրային ծածկագրով տնատիրության սպասարկման համար անհրաժեշտ 0,77122հա մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Հողամասի սահմանային չափերը որոշվում են ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Ճանաչել Ագարոն Մինասի Սասկյանի և Նախշուն Վիտյայի Անտանոսյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի գ.Դաշտադեմ 06-032-0005-0017 կադաստրային ծածկագրով տնատիրության սպասարկման համար անհրաժեշտ 0,77122հա մակերեսով հողամասի վրա կառուցված բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված շինությունների բնութագրի:

4. Տնատիրությանը տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Դաշտադեմ, 4-րդ փողոց, 3-րդ նրբանցք, թիվ 1 բնակելի տուն:

5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**



Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 05
ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 դեկտեմբերի 2019 թվականի N 1212-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶ, ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ, ՏԱՇԻՐ
ՔԱՂԱՔ, 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ, ԲԱՐԱՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 12 ՀԱՍՑԵՈՒՄ ՏՆԱՄԵՐՁ
ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով քաղաքացի Դավիթ Արշակի Սերոբյանի (անձնագիր՝ BA0093366, տրված 21.01.2014) դիմումը, 2019 թվականի նոյեմբերի 18-ին կազմված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18112019-06-0011 վկայականը, «Արտյոն Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 11-րդ և 13-րդ կետերով, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցները իրականացվել են 2007- ին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի, քաղաք Տաշիր, 2-րդ թաղամաս, Բարաջանյան փողոց, թիվ 12 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0044-0006) Դավիթ Արշակի, Մարիամ Սարգսի, Ստեփան Դավիթի և Մարինե Դավթի Սերոբյանների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0,05575հա տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված ընդամենը՝ 168,24քմ մակերեսով հետևյալ կառույցները ճանաչել օրինական՝ համաձայն «Արտյոն Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված և Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի՝
 - 1) Բնակելի տան նկուղը-32,71քմ,
 - 2) Բնակելի տան 1-ին հարկը -112,8քմ
 - 3) Բաց պատշգամբ-19,02քմ,
 - 4) Պարիսպ-3,71քմ

2. Կառույցները չեն խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Պարտավորեցնել ինքնական կառույցները իրականացնողներին սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում օրինականացված կառույցների համար համայնքի բյուջե վճարել՝ 95532 (իննսուն երկու հազար հինգ հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ

4. 60 օրյա ժամկետում սահմանված գումարը համայնքի բյուջե չվճարելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 06

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 դեկտեմբերի 2019 թվականի N 1213-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով, 48-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Արագ Զիվանի Սոլոյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը / անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 2201130, տրված՝ 23.02.2007/ ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, Գետափնյա փողոց, տուն 2Ա, թաղ. 1 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 1-ին թաղամաս, Գետափնյա փողոց, թիվ 2/1 բնակելի տուն հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝



Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 06
ք. Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 դեկտեմբերի 2019 թվականի N1214-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԱՆԺԱՄԿԵՏ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՏԱՇԻՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերից Տաշիրի քաղաքային համայնքին անհատույց փոխանցվող հողերի» N1055-Ն որոշումով, ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով «Տաշիրի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու մասին» N 90-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Կանոնադրական նպատակներին համապատասխան օգտագործելու և տիրապետելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքին սեփականության իրավունքով պատկանող քաղաք Տաշիր, 6-րդ թաղամաս, Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 68 հասցեի 2796,3 քմ մակերեսով անշարժ գույքը (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2360861, տրված՝ 16.06.2009) և նրա սպասարման համար անհրաժեշտ բնակավայրերի հասարակական կառուցապատման 0,249 հա մակերեսով հողամասը անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Տաշիրի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
2. «Տաշիրի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ- ի հետ կնքել անշարժ գույքի անհատույց

օգտագործման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:
3. Անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ Լոռու մարզի ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 06
ք.Տաշիր

